ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
Ծովինար գյուղական համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
«13» Ապրիլի 2015թ. թիվ 13

ԾՈՎԻՆԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Զեկ. Մ. Մարտոյան - համայնքի ղեկավար

1. 1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015թ. մարտի 26-ի թիվ 288-Ն որոշումը «կապիտալ սուբվենցիաներ համայնքին» գյուղատնտեսության նախարարության 03-04-2015թ. թիվ ԳՏ-31 պայմանագրով Ծովինար համայնքին տրամադրվել է 13750000 /տասներեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ:
1. 2. «Արփա-Սևան» ԲԲԸ-ի կողմից Ծովինար համայնքին 13750000 /տասներեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ կատարվել է ներդրում: Բյուջեի եկամտային մասը ավելացնել 27500000 /քսանյոթ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամով, վերը նշված գումարը ամրագրել գյուղատնտեսության գործառնական դասակարգման բաժին 4, խումբ 2, դաս 1, ծրագիր 18 տնտեսագիտական դասակարգման 5121 հոդվածին:
2. Հինք ընդունելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի Ծովինարի գյուղապետարանի կարիքների համար վառելիքի ձեռքբերման նպատակով գյուղապետարանի աշխատակազմի գործառնական դասակարգման բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 51 տնտեսագիտական դասակարգման 4221 հոդվածից պակասեցնել 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ, պահուստային միջոցների գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2, ծրագիր 51 տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածից պակասեցնել 200000 /երկու հարյուր հազար/ դրամ: Վերը նշված 320000 /երեք հարյուր քսան հազար/ դրամ գումարը ամրագրել գործառնական դասակարգման բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 51 տնտեսագիտական դասակարգման 4264 հոդվածին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Ա. ՔՈՉԱՐՅԱՆ
Ռ. ՄԱՐՏՈՅԱՆ
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Մ. ԶԱՔԱՐՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Համայնքի ղեկավար՝ Մ. Մարտոյան

Ճիշտ է՝ քարտուղար՝ Ս. Բալոյան